# ՆՈՐ-ԴԱՐ

№ 117 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ Շաբաթ 13 Յուլիսի 1885 Շաբաթ 13 Յուլիսի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ № 117

Տարեկան 10 րուբլի. վեց ամիսը՝ 6 րուբլի. երեք ամիսը՝ 3 ր.50 կ.
Հատը 5 կոպէկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ"
կամ Tiflis. Rédaction «Nor-Dar»։

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչ
2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար՝ կրկնապատիկ։

## ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

*«Նոր-Դար»-ին բաժանորդ են գրվում յուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը և վճարում են — 6 ր.*

*Հասցէների փոփոխութեան համար վճարում են եօթը հատ եօթը կոպէկանոց մարկա։*

*Թերթը ամարանոցում ստացող բաժանորդները վճարում են 80 կոպ.*

*Յայտարարութիւնները ընդունվում են միմիայն խմբագրատանը, քաղաքի կենտրոնում, պօստատան ետևը, Տրօյիցկի փողոցում Սամերա եկեղեցու հանդէպ։*

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Մի սարսափելի դէպքի Թիֆլիսի կեանքից։
Քրոնիկոն.—Լուրեր։
Թղթակցութիւններ. — Ալէքսանդրապօլ։
Քաղաքական. —Հուէի անցքի մանրամասնութիւնները։ Սպանիա Գերմանիա։ Լուրեր։
Խառն լուրեր։
«Նոր-Դար»-ի պատասխաններ։
Հեռագիրներ։
Յայտարարութիւններ։
Բանասիրական. —Մահմեդի կեանքը։
Ֆէլիէտօն.—Յառաջ Հենրի։

Թիֆլիս, 12 յուլիսի 1885

## ՄԻ ՍԱՐՍԱՓԵԼԻ ԴԷՊՔ ԹԻՖԼԻՍԻ ԿԵԱՆՔԻՑ։

### I.

Անցեալ ամսուայ սկզբներում մի սարսափելի և մի և նոյն ժամանակ մի անճոռնի եղեռնագործութիւն տեղի ունեցաւ քաղաքիս Հաւլաբար կոչուած մասում, որը գուցէ իւր տեսակում առաջին երևոյթն է Թիֆլիսի համար։ Դերձակ Գալստեանի փոքրիկ հինգ և կէս տարեկան աղջիկը, իւր առանձին գեղեցկութեամբ և մանկական անմեղութեամբ դրացիներին սիրելի Աննան, յանկարծ անհետացել էր։ Աննայի ծնողքը որտաճաք որոնում էին իրենց աղջկան։ Ամեն միջոց գործ դրուեցաւ կորած աղջկան գտնելու համար, բայց ի զուր. անցաւ մէկ օրը միւսի ետևից. յուսահատութեան վերին աստիճանի հասած անմխիթար ծնողքը չը գտան իրենց սիրելի աղջկան. գեղեցիկ Աննան չը վերադարձաւ։

Այդ ցաւալի դէպքից հինգ օր յետոյ փողոցում բարձրացրած օտարոտի մի աղմուկ տանից դուրս հանեց Աննայի վշտահար ծնողաց. հաւաքուած ամբոխը մատնացոյց էր լինում Գալստեանի տան առաջ ընկած մի քսակի վերայ, որ պարունակում էր իւր մէջ մարդու մարմին, բայց անտանելի հոտից ոչ ոք չէր կարողանում մօտենալ նրան։ Միմիայն Գալստեան դերձակի կինն էր, որ մի ակնթարթում թռաւ և բարձրացրեց քսակը. մայրը գտաւ կորած աղջկան և իւր բազուկների մէջ պինդ սեղմեց նրան։

Բայց ինչ էր մօր գտածը. գեղեցիկ և անմեղ Աննայի փոխարէն նրա աւերակը. մի քայքայուող մարմին, երեսը չանդրտած, մազերը գզգզած, մարմինը մրոտ և ապականուած, ոտքերի և կռների ոսկորները կոտրատած, շլինքը կանեփի թելով փաթթած, բերանը լեքը քարերով, լեզուն բերանից դուրս կախ ընկած... Կարելի՞ է պատմել մօր կսկիծը։ Մէկ ժամ է անցնում և հազիւ թէ կարելի է լինում մօր գրկից խլել նրա աղջկայ մարմինը։

Այն ինչ Գալստեանները դրացիների մօտ, հեռու տեղեր ընկած իրենց աղջկան են որոնում, դրացի որմնադիր Ջավախով անունով երիտասարդը խոստումներով իւր մօտ է հրապուրում գեղեցիկ Աննային և միամիտ երեխային տանում նրա ծնողաց տան վերնայարկը, որ անբնակ է մնում եղել միշտ, և բռնաբարում է նրան։ Փոքրիկ անմեղ և անպաշտպան զոհը, որը բացի լաւից անտարակոյս ոչինչ չէր սպասում,—այդ տաժանելի չարչարանքից յետոյ աւելի սարսափելի տանջանքների է ենթարկվում, մինչև որ ամեն բան վերջացնող մահը գալիս և նրա անմեղ կեանքին վերջ է տալիս։

Ինչպէս նշաններից երևում է, Ջավախովը փոքրիկ, անմեղ աղջկան բռնաբարելուց յետոյ, զանազան միջոցներ է գործ դրել նրան սպանելու համար, և երբ մէկ միջոցով չի կարողացել իւր նպատակին հասնելու մի ուրիշ միջոցի է դիմել։ Այսպէս երբ տեսնում է նա որ մարմնին տուած հարուածներից յետոյ էլ իւր զոհը դեռ կենդանի է մնում, եփ տուած ջուր է ածում նրա վերայ, կախում նրան վառարանի մէջ փաթթելով երեխայի վիզը կանեփի հաստ թելով։ Աշխատում է ոճրագործը յետոյ թաղել իւր զոհը տան վերնայարկի յատակի մէջ, որ հողից է. երբ տեսնում է, որ մարմինը արդէն հոտում է, քսակի մէջն է ձգում նրան, և ուրիշ ելք երևի չը գտնելով, ձգում է քսակը վերնայարկից վայր փողոցը, որև ընկնում է խեղճ աղջկայ մարմինը իւր ծնողաց բնակարանի դիմացը։

Այս սարսափելի և միանգամայն նոր դէպքը շատ վատ ներգործեց քաղաքիս բնակիչների վերայ և զայրացրեց ժողովրդին։ Պատմում էին, որ Ջավախովին բանտ տանելիս զայրացած ամբոխը ճանապարհին նրան շրջապատելով ուզում էր ինքը իսկոյն տեղն ու տեղը նրան դատել Լինչի օրէնքով, այդ ուզում էր ամբոխը, բայց շատացաւ հայհոյելով միայն։ Պատմում էին նոյնպէս, որ այդ տարօրինակ եղեռնագործութեան շարժառիթը, մօտիվը—վրէժխնդրութեան զգացմունքն է. իբրև թէ Ջավախովը խնդրել է Գալստեանների հասած աղջկայ ձեռքը, և մերժումն ստանալով իւր վրէժը լուծել է նրանց փոքրիկ Աննայից։

Այս ամենս գրվում էր տեղական ռուս մամուլի մէջ, ինչպէս և հետևեալ լուրը, որը, եթէ չափից դուրս սարսափելի չը լինէր, պէտք է շատ անմիտ համարուէր. իբրև թէ անմեղ երեխային սպանելու գործում աջակցել է Ջավախովին իւր մայրը, և դա ինքն է եփ տուած ջուրը բերել և ածել երեխայի վերայ։

Մեզ վերայ այնքան ծանր և վատ ներգործութիւն ունեցաւ այդ դէպքը, որ մենք անկարող գտնուեցանք այդ առթիւ մեր դիտողութիւններն անելու, թէպէտև տեղական մամուլի մէջ եղեռնագործութեանը տուած բացատրութիւնները բոլորովին անբնական և անհիմն էինք համարում։

Տեղական ռուս մամուլը այդ եղեռնագործութեան առթիւ իւր խորհրդածութիւնները յայտնեց։ Որովհետև այդ տարօրինակ և սարսափելի յանցանք գործողը պատկանում էր հասարակ արհեստաւորների դասին, ռուս մամուլը դրանից եզրակացնում էր, որ այդ դասակարգը մտաւորապէս և բարոյապէս շատ ընկած և ապականուած դրութեան մէջ պէտք է լինի, որ արտադրում է իւր միջից այնպիսի արարածներ, ինչպիսին մեզ ներկայանում է այսօր Ջաւախով որմնադիրը։

Որպէս զի մեր հասարակութիւնը ազատ լինի Ջավախովներից, ռուս մամուլի կարծիքով, պէտք է քաղաքիս արհեստաւորների դասակարգը հանել իւր ընկած դրութիւնից։

Իսկ այդ նպատակին հասնելու

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՄԱՀՄԵԴԻ ԿԵԱՆՔԸ

Վաշինգտոն Իրվինգ

Մահմեդի բոլոր արարմունքը Մեկկայի առնուելուց յետոյ ցոյց էին տալիս, որ այս յաղթանակն առաւել կրօնական պաշտօնեայի գործ էր, քան թէ զօրականի։ Նրա սիրտը մեղմացել էր մի անգամ մայրենի քաղաքին տէր լինելուց յետոյ. վրէժխնդրութեան զգացմունքը նրա սրտում շիջել էր յաջողութիւնից, և նա լիովին յօժար էր մոռանալ իւր կրած զրկանքը։

Անսարեանք, կամ Մեդինայի դաշնակիցք, սկսել էին երկնչել, որ այս յաջողութիւնը վնասակար չը լինէր նրանց համար։ Նրանք ուշի ուշով դիտում էին Մահմեդի ետևից, երբ նա մի անգամ աղօթքն աւարտելուց յետոյ, խոր մտածմամբ Ալսաֆեան բլուրի վերայ նստած՝ Մեկկայի վերայ էր նայում—իւր անցեալ տառապանաց և այժմեան նոր յաղթութեան ասպարէզի վերայ։ «Աղամբրև,—ասաց նա,—քաղաքների զարդն ես դու, սիրեցեալդ Ալլահի։ Ես քեզ երբէք չէի թողնել, եթէ իմ իսկ տոհմի ձեռքով աքսորուած չը լինէի"։—Այս լսելիս Անսարեանք ասացին իրարու. «Տեսէք, այժմ Մահմեդ իւր մայրենի քաղաքի իշխանն ու տէրն է. նա անշուշտ այստեղ կը մնայ և կը մոռանայ Մեդինան"։—Այս խօսքերը հասան մարգարէի ականջին, և նա կշտամբելով դաշնակիցներին, գոչեց. „Ո՛չ. դուք երդուել էք օգնական լինել ինձ, ես էլ երդուել եմ ձեզ հետ ապրել և մեռնել։ Ես չէի լինիլ Աստուծոյ սպասաւոր և առաքեալ, եթէ ձեզ թողնէի։"

Նա կատարեց իւր խոստմունքն և մինչև մահը մնաց Մեդինայի մէջ, որ ասպնջական էր նժդեհին։

Մահմեդին հերիք չէր մաքրել Քեաբէն և ջնջել կռապաշտութիւնը մայրենի քաղաքից. այժմ նա առաքեց սպառազէն գնդեր՝ խորտակելու կուռքերը նաև շրջակայ քաղաքներում ու գիւղերում, և դէպի իւր հաւատը դարձնելու նրանց երկրպագուներին։

Այս գնդերի հետ ուղարկուած ռազմասէր առաքեալների մէջ ամենաջերմեռն էր Հալէդ, որի հոգին տակաւին վառվում էր նոր դարձից։ Հասնելով Նախլախեան գաւառը, ուր հեթանոս Կորէշեանք հաւաքվում էին Ուզզայի տաճարում, նա մտաւ սրբազան անտառի մէջ, քայքայեց մեհեանն և տապալեց կուռքը։ Նոյն րոպէին կուռքի ետևից ճչելով և ձեռքերը կոտրոտելով, մազերն արձակած, մի սև ու մերկ այլանդակ պառաւ կին դուրս վազեց։ Հալէդ սուսերի մէկ հարուածով ջարդեց նրան կէսուկէս։ Այս դէպքը յետոյ Մահմեդին պատմելիս՝ նա հարցրեց, թէ արդեօք մի հասարակ կին էր այն, թէ չար ոգի։ „Նոյն իսկ Ուզզան էր այն",—պատասխանեց Մահմեդ։

Մի ուրիշ անգամ այս տեսակ ասպատակով Թէքամեան գաւառն արշաւելիս՝ Հալէդ ունէր իւր հետ երեք հարիւր յիսուն զօրական, որոնցից շատերը Սուլէյմեան ցեղին էին պատկանում. Նրա հետ էր նաև Մահմեդի ամենահին աշակերտներից մին, Աբդալ—Րահման։ Մարգարէն պատուիրած էր Հալէդին՝ հաշտութիւն և յօժարակամ հնազանդութիւն քարոզել, սէր ազդելով և բռնութիւնից խորշելով, քանի որ բնակիչներն ինքեանք նախայարձակ չլինէին։ Երկու օր դէպի Թէքամ չուելուց յետոյ, նրան պէտք եղաւ անցնել Ջալիմեան գաւառից, որի բնակիչներն ըստ մեծի մասին արդէն իսլամականք էին, մասամբ էլ Սաբէականք։ Հալէդի հօրեղբայրը, Աբդալլահի հայրն և քանի մի Սուլէյմեանք, մի օր երջանիկ Արաբիայից վերադառնալիս՝ սպանուած էին այս գաւառի բնակիչների ձեռքով։ Ուստի այժմ նրանք Հալէդի վրէժից երկնչելով, սպառազինուել էին։

Հալէդ ծածուկ ուրախացաւ, որ նրանք խսպառ զինուած էին դուրս գալիս իւր դէմ, և վէսական ողջունիւ «Իսլամական էք դուք, թէ անհաւատ»,—հարցրեց նա Ջալիմեաններին։ Նրանք դողդոջ ձայնով պատասխանեցին թէ իսլամականք էին։ „Դէ ուրեմն ինչու էք զէնք բռնած դուրս գալիս մեզ հանդէպ"։—„Որովհետև ունենք մի քանի թշնամի ցեղեր, որոնք կարող էին յանկարծակի մեր վերայ ընկնել»։

Հալէդ սաստիւ հրամայեց նրանց իջնել երիվարներից և վայր դնել զէնքերը։ Ոմանք հնազանդեցան և Հալէդ պատուիրեց իսկոյն բռնել և կապել նրանց. այլք փախան։ Այս փախուստը թշնամութեան ապացոյց համարեց Հալէդ և ընկաւ նրանց ետևից՝ արեան սաստիկ ճապաղիք գործելով. յետոյ աւերեց նրանց գաւառն և սպանեց մինչև անգամ մի քանի գերիներ։

Այս անպատշաճ խստութեան լուրն առնելիս՝ Մահմեդ բազուկները դէպի երկինք բարձրացրեց և վկայ կոչեց Ալլահին, որ ինքն մեղապարտ չէր այս բանի մէջ։ Իսկ երբ նա կշտամբում էր Հալէդին սրա վերադառնալուց յետոյ, Հալէդ կամեցաւ Աբդալլահի վերայ բարդել յանցանքը. բայց Մահմեդ գայրութեամբ 'ի բաց մերժեց իւր ամենահին և արժանաւոր հետևողին դիպչող զրպարտութիւնը, և ապա հրաման տուաւ վեհանձն Ալիին՝ գնալ վերադարձնել Ջալիմեան ազգին, ինչ որ Հալէդ յափշտակել էր նրանցից, և դրամական տուգանք հատուցանել սպանուածների ազգականներին. Այս յանձնարարութիւնը նա [illegible] կատարեց։ Տեղն ի տեղը հարց ու փորձ անելով, թէ ով ինչ վնաս և զրկանք էր կրած, նա վճարեց ամենքին, ինչ որ միայն պահանջում էին։ Բոլոր կորուստները յետ տալուց և բոլոր թափուած արեան գինը հատուցանելուց յետոյ նա բաժնեց ժողովրդին իւր մօտ մնացեալ փողերն և [illegible] ամենքին սիրտ գրաւեց. Այսպէս ուրեմն Ալին արժանի եղաւ Մարգարէի [illegible], իսկ [illegible] Հալէդ [illegible] մինչև անգամ և այն [illegible], որոնց [illegible]։

„Տեսիր, ինչպէս հանեցի հօրդ մահուան վրէժը",—ասաց նա Աբդալլահին.—„Լաւ է, ասէր, պատասխանեց սա գոհունակութեամբ, թէ հօրեղբօրդ մահուան վրէժը հանեցիր։ Դու [illegible] վայել գործերով"։

(Կը շարունակուի)

համար խորհուրդ է տալիս ռուս մամուլը բարոյապէս և մտաւորապէս կրթելու և զարգացնելու արհեստաւորների դասակարգը։

Անտարակոյս մտաւոր զարգացումը և արդի կրթութիւնը ամեն դասակարգի համար էլ անհրաժեշտ են և երկրի յառաջադիմութեան գրաւական. և խօսք չը կայ, որ քաղաքիս արհեստաւորների դասակարգի բարոյականութեան և բարքի ու վարքի պարզութեան չեն կարող նպաստել ամեն օր բազմացող զանազան գոյնի կլուբները, պանդոկները, զուարճութեան տեղերը, բայց և այնպէս ռուս մամուլի արած եզրակացութիւնների հետ համաձայն չենք, որովհետև անհիմն են։

Անհիմն ենք ասում, վասն զի Զավախովի յանցանքից չի կարելի եզրակացնել կամ ենթադրել, որ արհեստաւորների դասակարգը բարոյապէս ապականուած է։

Միւս կողմից անհիմն է այն ենթադրութիւնը, որ իբրև թէ բարոյապէս, մտաւորապէս բարձրացնելով ժողովրդի մի դասակարգ, Զավախովի գոյութիւնը անկարելի կը լինի, այսինքն նրա կատարած յանցանքը երևան չի գալ նրա մէջ։

Մենք կարծում ենք, որ եթէ մի հասարակութիւն դժբաղդութիւն ունի իւր մէջ հանդիպելու Զաւախովներին, նրանցից չի կարող ազատուել նա, եթէ նրան մտաւորապէս և բարոյապէս կրթենք էլ։ Ալլապէս պէտք է ասենք, որ Զավախովները երկրի բարոյական վիճակի արտադրութիւնները չեն, այլ դրանք ինքնուրոյն երևոյթներ են։

Եթէ մեր երկրացի մի մարդ, որքան էլ որ անկիրթ և անգրագէտ լինէր նա, կարող է մի անմեղ, սիրուն, հինգ տարեկան երեխային բռնաբարել անխղճօրէն, և այդ անպաշտպան և անզօր հրեշտակին գազանաբար տանջելով սպանել. մենք հաւատացած ենք, որ նոյն մարդը կրթուած էլ նոյնը կանէ, եթէ ոչ աւելի վատը։

Իզուր են կարծում մեզանում, որ կրթութիւնը, ուսումը կարող են ի բնէ աւանակից մարդ դարձնել. այդ սխալ է. աւանակը աւանակի էշն է։

Ճշմարիտ է, ուսումը, գիտութիւնը, կրթութիւնը հրաշքներ են գործում, բայց դրանց զօրութիւնը, դրանց ներգործութիւնն էլ իրենց սահմաններն ունին, նրանցից վեր դրանք անզօր են։

Միւս անգամին ենք թողնում մեր դիտողութիւնները.

Ս. Ս.

## ՔՐՈՆԻԿՈՆ

ԳՈՐԻՍԻՑ։ — Օղիի ակցիզի չափազանց ծանրութեան պատճառով, գաւառիս այգետէրերը ոչ միայն իրենց այգիների թթից օղի չեն քաշում, այլև այգին անգամ չեն գնում, որպէս զի չը տեսնեն, թէ ինչպէս Աստուծոյ շնորհած պարգևը, որով ամեն տարի իւր ընտանիքին կառավարում էր, այժմ փթում է ծառերի տակ. խօսքս մեծ այգետէրերի մասին չէ, որոնք այս կողմերում չը կան, այլ այն մանր այգետէրերի մասին՝ որոնց այգիների ծառերի թիւը 50-ից մինչև 150-ի հազիւ է հասնում։ Անցեալ տարիները այդ ծառերը թափվում էին 3 կամ 4 անգամ (թութը միանգամից չէ հասնում), իւրաքանչիւր թափ քաշելու համար պղինձները բանալու իրաւունք էին ստանում այնքան օրուան համար, քանի օր որ կը բաւականացնէր թափած թութը։ Բացի դրանից ով ինչ մեծութեան պղնձով կամենար, կարող էր քաշել։ Բայց այժմ իւրաքանչիւր այգետէր պիտի ունենայ ա) որոշեալ մեծութեան պղինձ (ուրեմն հները անպէտք են, բ) ամեն անգամ 7 օրից պակաս չէ կարող պղինձը բանալու իրաւունք ստանալ, գ) քաշելուց յետոյ դէտք է օղիները չափուին և կնքուին, դ) որոշեալ քանակութիւնից պակաս իրաւունք չկայ վաճառելու։ Ընթերցողը կը տեսնէ, որ ես չեմ համեմատում անցեալ տարիների և այս տարուայ ակցիզի հարկի ծանրութիւնը, որ հնգապատկուած է. և որը ժողովուրդը առանց տրտնջալու լաւ կը վճարէ և կը քաշէ իւր թութը, եթէ առաջին պայմանները չը լինին։ Այս գաւառում ռուսաց գիւղերի նման չը կան գինետներ, ուր կարելի լինէր արդիւնահանել տեղական օղին, չկան մօտիկ քաղաքներ, չկան սայլի ճանապարհներ արտահանելու համար։ Մի հատ գինետուն կայ Գորիսում, որը ոչ թէ ժողովրդի վրայ է օղի ծախում, այլ մի քանի ծառայողների. մի խօսքով կը քաշէին թութը ամենածանր ակցիզ վճարելով՝ եթէ քաշելուց յետոյ օղիները չը կնքուէին։ Ահա թէ անցեալ տարիները ինչպէս էին վաճառում։ այգետէր գիւղացին մի քանի փութ օղի բարձում էր իւր աւանակի վերայ, տանում էր սարի կողմի գիւղերը և փոխարինում մի պանրի, իւղի, բրդի և այլ պիտոյքների հետ, բայց այժմ գիւղացին պէտք է սպասէ, թէ ինչ է, որտեղից որ է մի կորած, մոլորած մարդ պիտի գայ և իրանից օղի առնէ։ Այս տարի թէ գիւղացիները զրկուեցան իրենց օրական ապրուստից և թէ գանձարանը իւր 40,000 ր. ակցիզից։

—

ՆՈՐ ՏԵՂԻՑ։ — Անցեալ ամսի 29-ին Գորիսի բանտից օր ցերեկով երկու աւազակ, որոնք 12 տարի ժամանակով տաժանակիր աշխատանքին էին դատապարտուած, — փախան։ Բանտապետը 2 օրով արձակուրդ առած և հեռացած էր այստեղից, գաւառապետը նոյնպէս այստեղ չէր։

Զարմանալին այն է, որ այդ օրը ամբողջ Գորիսում մի հատ ձի չը գտնուեցաւ, որ հեծնէին աւազակներին հետևելու համար. գաւառապետի օգնականը 8 վերստ ոտով է գնացել նրանց յետևից։ Աւազակները շատ մարդկանց պատահելով, շատերի [illegible] հարցնելով՝ մտել են Ղափանի անտառը և անյայտացել։ Նրանցից մէկը հայ է, միւսը պարսիկ։ Փախստականներին կալանաւորելու համար միջոցներ են ձեռք առնուած։

Այս տարի այս կողմերում, ընդհանրապէս վերցրած, հացի բերքը վատ է, բայց հին ցորէն շատ կայ և չափազանց էլ էժան է։

Մեր գաւառում միայն Գորիս գիւղն է, ուր միս է ճարվում. բայց չը նայելով որ այստեղ մսացուն, ինչպէս ասում են, ջրի գին ունի, այնու ամենայնիւ միսը Թիֆլիսից էլ թանկ են ծախում։

—

„Моск. Вѣд.“ լրագրի ասելով ներկայ տարուայ աշնանը մտադրութիւն կայ Ղազանում փուչի արդիւնաբերութեան աշխարհահանդէս բանալու, բացառապէս տեղական նահանգի արդիւնաբերութեան։

—

„Новости“ լրագիրը հաղորդում է, որ կառավարչական շրջաններում մտադրութիւն կայ երկաթուղիների գծերի վերայ գտնուող նահանգական քաղաքներում տարէնը մի անգամ հիմնել միջազգային հացային մթերքների վաճառանոց։

—

Մեզ գրում են.—Յայտնի է, որ Ներսիսեան դպրոցի աշակերտներից մի երգեցիկ խումբ է կազմուած, որը երգելով ննջեցեալների յուղարկաւորութեան հանդէսներին, վարձատրութիւն է ստանում մեռելատէրից և այդ գումարը անցնում է ուսումնարանի վարչութեան յօգուտ այդ ուսումնարանի։ Այդ արդիւնքը, մեր կարծիքով, տարեկան մօտաւորապէս 1000 ր. կը հասնի։ Այժմ տեսնում ենք, որ մի քանի եկեղեցու սիրացուներ ինքնագլուխ կերպով զանազան երգեցիկ խմբեր են կազմել և տանում են ննջեցեալների վերայ. այդպիսով Ներսիսեան դպրոցը զրկվում է դրա արդիւնքից։ Հրաւիրում ենք թեմիս սրբազան առաջնորդի ուշադրութիւնը. արդեօք յայտնի է նրան այդ ինքնակոչ խմբերի գոյութիւնը, որոնք մի կողմից վնասում են դպրոցին նիւթականապէս, իսկ միւս կողմից էլ, իրենց աններդաշնակ և խառնափնթոր երգեցողութիւնով ձանձրութիւն են պատճառում ունկնդիրներին։

—

„Новое Время“ լրագիրը հաղորդում է, որ ամերիկական Աստուածաշնչի ընկերութիւնը ռուսական ընկերութեան յանձնեց 4,000 Անդրկասպեան երկրում կենդրոնացած զօրքերի և բանուոր ժողովրդի մէջ սուրբ գիրքը տարածելու նպատակով։ Այդ պաշտօնը այս ամառ յանձն առաւ ընկերութեան աշխատակից-անդամներից մէկը՝ պ. Ռադչենկոն, որը նախկին տարիներ միևնոյն նպատակով ճանապարհորդել է Արևելեան Սիբիրիայում։

—

Ի նկատի ունենալով վերջին ժամանակներումս Ռուսիայի պետութեան զանազան տեղերում տարածուած և յաճախ գողութիւնները գերեզմանատներում, արդարադատութեան մինիստրութեան մէջ, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, հարց է բարձրացրած այդ գողութիւններին վերաբերեալ օրէնքի յօդուածները փոփոխելու։ Մտադրութիւն կայ գերեզմանատներում կատարուած գողութիւնը հաւասար համարել սրբապղծութեան. շիրիմների խաչերի և յիշատակարաննե-

## ՖԵԼԻԵՏՕՆ

### ՑՈՌԱՂ ՀԷՆՐԻ.

(Deutsches Montagsblatt)

Գերմաներէնից.

—

«Էհ, դատարկ բան։ Այդ երբէք չի վնասել նրան։ Ես էլ եմ աշխատել ջահել ժամանակս։ Չէ, հարկաւոր չէ երես տալ։ Թող աշխատէ և իւր գործը տեսնէ»։

Այսպէս խօսող մարդն վերցրեց իւր գտակն և գաւազանը, թեթև համբուրեց ամուսնի ճակատին և հեռացաւ բնակարանից։

Կինը մի քանի րոպէ նստած մնաց մտախոհ, յետոյ վեր կացաւ և մտաւ մի փոքրիկ սենեակ, որ դէպի բակն էր նայում։ Այնտեղ գրասեղանի մօտ նստած էր մի պատանի և աշխատում էր։ Նրա առջև դրուած էր մի դասագիրք և մի բառարան, որի մէջ սևեռ թերթատում էր։

„Ինչպէս է բանդ, Հէնրի“։

Պատանին վերև տարաւ իւր գունատ դէմքն և ծանրութեամբ նայեց մօր վերայ։

„Արդեօք կարող կը լինե՞ս դուրս հանել գործդ։ Ես իսկոյն խօսում էի հօրդ հետ. նա չէ ուզում թոյլ տալ“։

«Ո՞հ մայրիկ, միթէ չէի խնդրել քեզնից, որ նրան բան չասես“ — ընդհատեց նրան պատանին կշտամբական ձայնով։ „Ես պիտի պատրաստեմ իմ դասերս։ Չեմ կարող ոչ ներողութեան պատճառներ յառաջ բերել, ոչ էլ վաղաժամ անից յետ մնալ“։

«Բայց դու այնպէս գունատ ես, Հէնրի ջան։ Ինչպէս է գլխիդ ցաւը. մէկ քիչ թեթևացա՞ւ, թէ չէ“։

Պատանին գլխով արաւ. սակայն յոգնած աչքերն. դրանց տակի սևաթոյր օղակներն, թալկահար դէմքի լարուած պատկերը — դաւաճանում էին նրան։

«Դոնէ գնա փոքր ինչ հանգչելու պառկիր. լաւ է որ էգուց վաղ վեր կենաս և դասերդ պատրաստես»։

«Ո՛չ, ոչ, անկարելի է։ Էգուց առաւօտ գերմաներէն շարադրութիւն ունիմ գրելու»։

Նա սկսաւ նորից պարապել. իսկ մայրը նստաւ մի աթոռի վերայ և լուռ մունջ մտիկ էր տալիս որդուն։

Մայրն երջանիկ էր զգում իրեն որդու մօտ գտնուելիս, և լռում էր, եթէ նա խօսել չը կամենար։ Երբեմն երբեմն պատանին աչքերն վերցնում էր և մօր վերայ նայում։ Այդ միջոցին գորովական սիրոյ մի նշոյլ էր փայլում նրա դէմքի վերայ և մի թեթև, գրեթէ վշտախառն ժպիտ թաթռում նրա շրթունքների շուրջը։

Յանկարծ դուռը ճանկռտեցին։ „Բէլլոն է“։

Տղան վեր թռաւ տեղից։ Մի մեծ յաղթանդամ շուն ներս վազեց, սկսաւ պատանուն քսուել, ագին տատանելով տիկնոջ մօտեցաւ և վերջապէս պառկեց սեղանի տակ։

Առաջուայ երկու աչքերի տեղ՝ այժմ չորս կարեկից աչքեր էին բևեռուած ջանասէր աշակերտի վերայ։

Մի քանի րոպէից յետոյ տիկինն ասաց. «Այդ ինչ ես պատրաստում, որդի. — Հարցաքննութեան դասե՞րդ»։ Տեսնում եմ, որ դու ոչ մի ազատ րոպէ չունիս այս վերջին շաբաթներս»։

Պատանին գլուխը թօթուեց։ «Չէ, մայրիկ, բայց վերջին եռամսեակի յառաջադիմութիւնից և վարքից շատ բան է կախուած։ Ես չեմ կարող դասարանս փոխել, եթէ լաւ չաշխատեմ“։

«Չը փոխես էլ, ինչ կորուստ։ Դու խօ ամենափոքրն ես դասարանիդ մէջ»։

«Կարծեմ։—Սուս կաց, Բէլլօ, պառկի՛ր։—Բայց, մայրիկ, ինչպէս կարելի է ասել, թէ դասարանս փոխեմ կամ չը փոխեմ, միևնոյն է։ Հայս լաւ մխիթարանք կը լինի հօրս համար, թէ որ ես դասարանումս նստած մնամ“։

Մայրն ոչինչ պատասխան չը տուաւ։ Հէնրին իրաւունք ունէր։ Նրա հայրն իրաւ մի շատ խստապահանջ մարդ էր, և այս խստութիւնն էր պատճառ, որ որդին վարժատուն մտնելուն պէս դարձել էր մի օրինակելի աշակերտ։

Եւ թէկուզ դրսում հեշտաշունչ սիւքեր փչէին, պայծառ արև ամբողջ բնութիւնը զուարթացնէր, — թէկուզ ընկերներն փունջ հաւաքելու համար դաշտ ելնէին, վիշապներ արձակէին, ծառերի վերայ մագլցէին, փոսերի վերայից թռչկոտէին, կայտառ խաղերով և ոգեշունչ երգերով օդը հնչեցնէին, — Հէնրիին փոյթ չէր։ Նա մինչև նստած էր մնում գրքերի վերայ և հազիւ թէ համարձակվում էր փողոց դուրս գալ՝ շտապելով հարևան կազմարարի մօտ գնալու կամ թուղթ և տետր գնելու համար։

„Սակայն, երբ որ արձակուրդ լինի՝ մի լաւ կը հանգստանաս, որդի ջան։ Այն ժամանակ մենք քեզ հօրեղբօր ծառաւէտ ագարակը կուղարկենք, այնտեղ ազատ ազատ կը վազվզես, հրացան կարձակես, որսի կերթաս»։

Պատանու աչքերը պսպղացին։ „Ինչ լաւ կը լինի, մայրիկ. ես Բէլլոյին էլ հետս կը տանեմ“, ասաց նա անմեղ մանկական խնդութեամբ։

Երբ որ Բէլլոյի անունը տուին, սա տեղից վերկացաւ և իւր բրդոտ գլուխը Հէնրիի ծնկի վերայ դրաւ։

Մանուկներն և շներն ամենասրտառուչ էակներն են կենդանի աշխարհում։ Առաջինները յուզում են մեզ իրենց անմեղութեամբ, վերջիններն շարժում են մեր գութն իրենց անձնուէր հաւատարմութեամբ։

„Իմ սիրուն, իմ լաւ Բէլլօս“—ասաց տղայն և սկսաւ շանը շոյել։ „Արձակուրդին ինձ հետ ագարակ կերթաս, Բէլլօ“։

Շունը կարծես թէ հասկացաւ այդ խօսքերն, նա իւր խելօք աչքերն փոքրիկ տիրոջ վերայ շեշտելով, հէնց իմանաս աղաչում էր, որ էլ զգուեն իրեն, էլ առաւել փաղաքշեն։

„Տիրուհի“ — ասաց այդ միջոցին, դուռը բանալով, մի աղախին։ Պարոնը մարդ է ուղարկել ձեզ յայտնելու, թէ նա մինչև կէս գիշեր կլուբում պիտի մնայ։

„Դէ լաւ“, ասաց տանտիկինն։ „Ուրեմն վեր կաց, Հէնրի. գնանք իսկոյն ընթրենք“։

«Բնաւ ուտելու ախորժակ չունիմ, ասաց գունաթափ պատանին և յօրանջեց։

«Չէ, չէ, որդի. եթէ իսկի բան չուտես, հապա ինչ կը լինի։ Դոնէ մի կտոր հաց և մի բաժակ գինի“։

Հէնրիի հայրը կէս գիշերից յետոյ տուն վերադառնալիս, բակի միջից անցնելիս, իւր բնակարանի պատուհանները դիտեց։—Թւում էր թէ գոհ մնաց՝ Հէնրին դեռ աշխատում էր։ „Հէնրին մի ջանասէր տղայ է, արդարամիտ տղայ“, մտածեց հայրը.

Արեգակն բարձրացել էր և ճառագայթում։ Օդը լի էր նորափթիթ ծաղիկների բուրմունքով, թռչունների դայլայլիկով։ Թուփերի մէջ մժղուկներ էին բզզում և նոյարոզրոզ պտուղներն արծաթափայլ շիթերով շողշողում։ Զեփիւռն էր քաղցրիկ, ջերմ օդն ամառուան աւետաբեր։ Բնութիւնը տօն էր տօնում զուարթաբար հրճուանքով։

Սակայն Հէնրին դարձեալ նստած էր գրքերի վերայ։ Եւ ինչպէս չը նստէր, քանի որ քննութիւնների ժամանակն արդէն վերայ էր հասել։ Մի գիշեր նա սաստիկ հազաց քանիցս անգամ։

Մայրն լսեց այդ հազն և տագնապեցաւ։ Խեղճ կնոջ մտքերն դէպի որդին էին սլանում, մինչդեռ անգութ մարդն հանգիստ քնած էր անկողնի մէջ։ Նա գիտէր, նա զգում էր որդու վիճակը։ Նա հասկանում էր, որ որդու մարմինը մաշվում է և հիւծում ողջ հուանդից։

„Խնդրում եմ քեզ, ա՛յ մարդ“, ասաց նա մի առաւօտ, երբ որ տղայն շտապել էր հեռանալ տնից ժամ առաջ վարժարան հասնելու փութով՝ մինչև անգամ առանց նախաճաշի, — „խնդրում եմ քեզ՝ արգելիր Հէնրիին այս անմիտ աշխատանքը։ Չե՞ս տեսնում, որ խեղճը բոլորովին նիհարացել է։

Ի՞նչ օգուտ այդ չափազանց պարապմունքից։ Լաւ չէ՞, որ նա դասարանում մնայ“։

«Ա՜հ, Աննա, դատարկ խօսքեր ես ասում։ Այդ քո խելքի բանը չէ։ Բնական է, որ աշխատանքից մարդ փոքր ինչ կը յոգնի։ Բայց մեր որդուն ոչինչ չէ պակասում, սնունդը տեղն է։ Ես պահանջում եմ, որ նա անցնի միւս դասարան»։

„Սակայն յիմարութիւն է այդպէս պարտասել, վաստակաբեկ անել, չարրի մնասելը ընդունել գերեզմաններ քանդելու, այսինքն փորելու հաւասար։ Նոր օրէնքի համաձայն գերեզմանատան վերոյիշեալ տեսակի գողերը կը դատապարտուին Սիբիրիայում աքսորի։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի գաւառի մի քանի գիւղերում՝ Լխում և Սագուրամոյում եղջերաւոր անասունների հիւանդութիւն է երևացել։

—

„Новости“ լրագրի ասելով, մօտիկ ժամանակում Պետերբուրգում՝ Ծովակալութեան հրապարակի վերայ կը դընեն բանաստեղծ Վ. Ա. Ժուկովսկու, իշխան Ա. Մ. Գորչակովի, Յ. Ս. Տուրգենևի և այլոց կիսարձանները։

—

„Каспій“ լրագիրը լսել է, որ Ապշերոնի թերակղզու երկրաբանական հետազօտութիւնների համար շուտով այնտեղ կը հասնեն երկրաբաններ՝ Սարոկին և Սիմոնովիչը։

—

Ամսոյս 10-ին չորեքշաբթի Բագուայ ոստիկանապետի հեռագրի համաձայն երկաթուղու կայարանում տեղւոյս ոստիկանութիւնը ձերբակալեց Շուշեցի Ա. Կ.-ին, որը իւր փեսային 17,000 ր. գողանալով փախչում էր արտասահման։ Բռնուելով Ա. Կ. իւր յանցանքը խոստովանեց և յայտնեց, որ ինքը դիտաւորութիւն ունէր գնալու արտասահման։ Դրան տարան, ինչպէս գրում է „Кавказъ“ թերթը, քաղաքիս Մետեխ կոչուած բերդը և այնտեղ փակեցին։

—

ԺԷԼԷԶՆԱՎՕԴՍԿԻՑ հեռագրում են „Новое Время“ թերթին. Հրէուհի Բերլինը, որը եկել էր Բաստովեցի հրէուհի Լէվինցի հետ, խնդրում է Լևինցից որ Նրա եօթը տարեկան որդու հետ գրօսնելու գնայ. խաբելով տանում է երեխային Պետրովսկ և այնտեղից Կումսկայա կայարանը, որտեղ սպանում է Նա երեխային։ Մարդասպանը կամեցաւ փախուստ տալ։ բայց ձերբակալեցին Նրան։ Այդ աղջկայ յանցանքը վերագրում են խելագարութեան։

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ, 6 յուլիսի.—Ինչպէս ուրիշ տեղեր, որ շատ անգամ կարդում ենք լրագրներում, այնպէս էլ Ալէքսանդրապօլում „քաստա“-ութիւնը սարսափելի է։ Փողի պակասութիւնը զգալի է ամեն մի դասակարգի մարդու։ Ապրանքը՝ փողի պակասութեան համար, ինչպէս ասում են, ոտի հետ է գնում։ 15—20 հազար ր. ապրանք ունեցող վաճառականը, օրական 15—20 ր. առևտուր ունի։ Չը նայելով, որ վաճառականութիւնը այս դրութեան մէջ է, և հետզհետէ աւելի կը վատանայ, բայց ապրուստի եղանակը օրէ օր բարդվում ու աւելի բազմակողմանի պահանջներ է անում։ Հօրէնական համեստ եղանակը ապրուստի, տեղի է տուել զեխութեան ու շռայլութեան. խնայող հայերը թողել են ասպարէզը շռայլ որդւոց, որոնք չունենալով յաջողութիւն և չը կարողանալով չափաւորել իրենց ապրուստի եղանակը, այսօր քանի քանի, մէկ 8—10 տարի առաջ հարուստ ընտանիքներ, վերջին չքաւորութեան մէջ են։

Գիւղացւոց մասին խօսելը խօ աւելորդ է։ Նրանք ևս վարակուելով քաղաքի շռայլութիւնից, թողել են գիւղական պարզ կեանքը, թողել են իրենց պատրաստած պատուական ու դիմացկուն շալն ու կտաւը և գործ են ածում մահուդ ու չիթ, որ առաջինների կիսու չափ էլ չի դիմանայ, թողել են համեղ թանակ ապուրը ու տեղը չայ են ընդունել և այդպէս էլ մնացած բոլոր բաները ու թաղուել են մինչև կոկորդները պարտքի մէջ, դարձել խորտ մի քանի վաշխառու ջհուտների ու սիւլիկ վաճառականների, որոնցից ոչ թէ իրենք, այլ իրենց թոռներն էլ չեն կարող ազատուել։

Հացը, որ միակ բանն է պատուելս վաճառահանութեան, սարսափելի ընկած է և գիւղացին էլ շատ չունի, որ այդ ապրանքը ընկած գնով, դարձեալ այնքան ծախէ, որքով ունենայ ձեռքում. Նա, ընդհակառակը, այնքան է կարողանում ծախել, որ իւր պարտքի տոկոսը միայն հազիւ է վճարում. պարտքով է առնում խոտ, ձէթ և այլն և այլն գործիքներ. իւրեն ու որդւոց չարքազկի ու արխալղուն, կնոջ դալրացուն, աղջկայ ջեհիզն ու բաշլըղը և այլն և այլն։ Վաճառականի խանութի ապրանքը քիչ քիչ հատնում է առանց մի նշանաւոր գումարի ձեռքն ընկնելու, որով կարողանար տարած ապրանքին նորը փոխարինել. Նա իւր փողերը մաս մաս ստանալով, հետզհետէ մսխում է և չի կարողանում այլ ևս իւր գործը դարձնել, իսկ գիւղացին ոչ մի ժամանակ չը կարողանալով տալիքի համաձայն գումար ձեռք բերել, տարին տասներկու ամիս ճնշվում է պարտքի տակ, իւր բոլոր ուժը հաւաքած պարտքի տոկոսը տարեկան հազիւ կարողանալով վճարել։ Այսպէս կարճ ժամանակի մէջ համ պարտապանն է աղքատանում, համ պարտատէրը։

Փողի սղութիւնը չէ՞ր արգելք պատճառ յունիսի 30-ին տեղւոյս օրիորդաց „Прогимназія“-ի վիճակախաղին, բացի մի քանի հարուստներից, միւսների չը մասնակցելը, չը նայելով մուտքի ու վիճակատոմսի գինը միայն 45 կ. էր. ալէքսանդրապօլցիք միշտ եղել են ուսումնասէր, որին վկայ կարող են լինել նրանց երբեմն ունեցած փառաւոր դպրոցը և առանձին սիրով ու համակրութեամբ են վերաբերուել դըպրոցատան ամեն մի գործի ու առանց հարցնելու միշտ գցել իւր լուման նրա գանձանակը։ Թէ որքան է սիրում մեր ժողովուրդը այդպիսի հանդէսներ, երևում է նրանից, որ խուռն բազմութիւնը քաղաքական այգին, որտեղ կատարվում է վիճակախաղ, շրջապատած ժամերով կանգնած է, չը համարձակուելով ներս մտնել փողի սղութեան համար։ Հանդէսը փառաւոր էր և վերջացաւ երեկոյեան ժամը 11-ին։

Աբմենակ։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

### ՀՈՒԷԻ ԱՆՑՔԻ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Յարձակումը այն քաղաքաբերդի վերայ, որտեղ Փրանսիացիք էին գտնվում, պատահեցաւ յունիսի 23-ի գիշերը. Այդ գիշերը կատարեալ սպանդանոց էր։ Ոչ միայն ապստամբների ձեռքն էր ընկնում այդ սարսափելի գիշերը, սպաները, զինուորները և մինչև անգամ այն աննամացիները, որոնց մասին կասկած էին տանում փրանսիացիներին համակրութեան մէջ անգթաբար սրախողխող էր լինում։ Մի քանի սպաներ, որոնք քաղաքից բաւական հեռու էին բնակվում, չափազանց մեծ դժուարութեամբ կարողացան իրենց հայրենակիցների հետ միանալ։ Ապստամբները հրդեհեցին նրանց տները և կոտորեցին բոլոր կենողներին։ Այն ամառանոցներից մէկում, որոնք զետեղուած են Հուէ և Թուկամ գետերի մէջ, բնակվում էր ծովային ռըմբակոծ Նաւապետ Բրունոն։ Սա հրացանաձգութեան ձայներ լսելով իսկոյն վճռեց գնալ քաղաք. բայց շատ ուշ էր։ Նրա տունը արդէն այրվում էր և ինքն դիտապաստ ընկաւ կատաղի աննամացիների հարուածների տակ, որոնք սպանեցին նմանապէս նրա կնոջը և երեխային, որոնք նոր էին Փրանսիայից եկել։

Փրանսիական քաղաքապահ զօրագունդը, ինչպէս երևում է, խաբուել էր աննամացիների առ երես ցոյց տուած հպատակութիւնից։ Վերջինները ամեն հնար գործ էին դրել Փրանսիացիների արթնութիւնը քնացնելու։ Նըրանք, որոնք խոհեմութիւն էին ունեցել քաղաքաբերդում մնալու, բանակուել էին յարդով ծածկուած տնակների մէջ։ Աննամացիները այրեցին սընակները և վաղաժամ յարձակում գործեցին Փրանսիացիների վերայ։ Քաղաքապահ զօրքը կը ոչնչանար, եթէ Փրանսիական սպաները այս անակընկալ յարձակումի միջոցին կորցնէին իրենց հոգւոյ արիութիւնը։ Նրանց սառնասրտութիւնը և հոգւոյ արիութիւնը բորբոքեցին Փրանսիայի զինուորների քաջութիւնը և թշնամու առաջին յարձակումը հետևաբար յետ մղուեցաւ։ Ապա սկսեց տաք հրացանաձգութիւնը և լուսածագին աննամացիները նորից գրոհ տուին Փրանսիացիների վերայ։ Բայց այժմ արդէն ոսոխների յաջողութեան պայմանները փոխուած էին։ Նեղ տեղում համախմբուած աննամացիները գերազանց նշանակէտ էին ծառայում Փրանսիացիների արագաձիգ հրացանների համար։ Կէս ժամուայ չափ միջոցում արդէն 1,500 թշնամու թաւալգլոր դիակները ծածկել էին քաղաքաբերդի շուրջը։ Մնացեալները վայրենի փախուստ տուին։

Ճնշելով ապստամբութիւնը, Աննամի գլխաւոր զօրապետ գեներալ Կուրսին հետևեալ կարգադրութիւններ յայտարարեց։ Նախ և առաջ նա հրաւիրեց Հուէի շրջակայքի բնակիչներին, որոնց մէջ կային բազմաթիւ չինացի վաճառականներ, իրենց տուն վերադառնալ, որտեղ նրանք կարող են հանգիստ գտնել Փրանսիական կառավարութեան պաշտպանութեան տակ. յետոյ նա ապստամբներին առաջարկեց քսանօրեայ ժամանակամիջոցում հնազանդուել և ապա հրաման տուեց աննամական կանոնաւոր զօրքի արձակման մասին։ Զէնքերը պէտք յետ առնուին գլխաւոր նահանգական քաղաքներում և ուղարկուէին նահանգապետների պատասխանատուութեամբ Հուէ։ Քաղաքները նմանապէս պատասխանատու են այս հրամանի ճշտիւ կատարելու մէջ։ Աննամական զօրքի թիւը հասնում է 30,000-ի և զանազան գնդերի է բաժանվում, որոնք գիշատիչ գազանների անուններ են կրում, թշնամու վերայ երկիւղ բերելու համար։

Արտասահմանեան մի լրագիր, մասնակից լինելով Փրանսիական սպանե-

---

չարել մի երեխայ"։

„Այո, եթէ բանը քո կամքին թողուէր, մեզ պէտք կը լինէր բամբակով փաթաթած պահել Նրան տաք սենեակում։ Նրա աշխարհ գալու օրից դու միշտ փայփայել ես Նրան. գէ, թոյլ տուր, որ մի անգամ էլ իւր կամքով շարժի։ Այսօր շատ բան է պահանջվում տղայներից—թող Նա էլ յառաջ գնայ։ Միթէ ամօթ չի՞ լինիլ մեզ, եթէ Նա մի տարուայ զինուորական ծառայութեան խրատունք չը ստանայ։ Միթէ կուզենայի՞ր, որ Նա մէկի տեղ երեք տարի ծառայէր"։

«Սակայն, մարդ, ո՞վ է բան ասում այդ մասին»։

«Այդ մասին բան ասո՞ւմ։ Ահա քեզ Բերենսի օրինակը։ Ծնողները թոյլ էին տալիս Նրան, որ ինչ կամենայ, այն անէ, Այս օրերս ինքդ տեսար, թէ ինչպէս էր գանգատվում ծառայութեան վերայ։ Իսկ Նրա խայտառակութի՞նը։—Ինչ ասել կուզէ. Հէնրին փոքր ինչ գունատ է երևում,— այո գունատ։ Բայց թող միայն քննութիւնը վերջացնէ. կը տեսնես յետոյ, թէ ինչպէս շուտ կը դրստուի ամառանոցում»։

„Սակայն եթէ դասարանը փոխել չը կարանայ", հարցրեց երկնչելով գըթասէր կինը։—«Միթէ այն ժամանակ էլ չը պէտք կարանայ ամառանոց գընալ։ Ամառանոց գնալն անհրաժեշտ է Նրան»։

Մարդը գլուխը թօթուեց։ „Եթէ Նա քննութիւնը յաջող վերջացնէ, ամառանոցը մի վարձատրութիւն կը լինի Նրա համար. իսկ հակառակ դիպուածում՝ ես կը պահանջեմ, որ Նա արձակուրդին էլ օրն ի բուն աշխատէ, որպէս զի գէթ աշնան կարող լինի միւս դասարանն ա՛նցնել։ Բայց եթէ Նա համարձակուի դասարանի մէջ մնալ, ես էլ չը գիտեմ, թէ ինչ կանեմ Նրան"։

Կինը դողաց։ Նա նկատեց, որ իւր ցասկոտ ամուսնու ճակատի ջիղերն ուռել էին, և լռեց։ Նա փորձով գիտէր, որ այդպիսի դէպքերում համոզիչ խօսքերն աւելորդ էին, այսուամենայնիւ Նա սիրտ առաւ մի թեթև դիմադրութիւն ցոյց տալու այս անգամ։ Սակայն մարդն մի հաստ բառով մերժեց Նրա բոլոր միջնորդութիւնն և „դատարկ բարբաջանք" ասելով դուրս ելաւ սենեակից։

Հարցաքննութիւնից ութ օր առաջ պէտք եղաւ որ Հէնրին անկողին մըտնէր։ Նրան տիրել էր մի տարօրինակ թուլութիւն։ Նա դարձեալ գանգատվում էր գլխացաւի վերայ, և մի օր ստիպուել էր կէսօրից առաջ տուն գալ վարժարանից, որովհետև, ինչպէս ասում էր, աչքերը յանկարծ մթնել էին և սիրտը յետ էր եկել։ Եւ Նրա այդ վիճակը ճիշտ մինչև քննութեան օրը տևեց։

Յետոյ Նա վերկացաւ։ Նա կամենում էր վարժարան գնալ—և գնաց՝ կարծես թէ առաջուանից աւելի ժիր քայլերով։

Նրա գնալուց առաջ հայրը կանչեց Նրան իւր մօտ և թօթուեց Նրա ուսերից։

„Դէ, Հէնրի. ահա նորից լաւացար, չէ՞։ Ապրե՛ս, իմ կորի՛ւն։ Ինչ ես կարծում, դասարանդ կը փոխե՞ս թէ ոչ"։

Տղայն փորձելով նայեց հօր աչքերի մէջ և տեսաւ Նրա դէմքի վերայ մի անվկանդ խստութիւն, որից Նա սովորած էր վախենալ մանկութիւնից ի վեր։ Պատանին հանգիստ պատասխան տուաւ։

„Չը գիտեմ, հայրիկ։—Վերջին շաբաթս զուր կորաւ. կրկնութիւն անել չը կարողացայ։—Այդ շատ վատ էր ինձ համար",

„Նա ստիպուած էր յետ մնալ վարժարանից", կանչեց կինը, բոլորովին յետ մնալ։ Եթէ Նա դասարանը չը փոխէ, դու, գիտեմ, պէտի բարկանաս. բայց ինչ մեղք ունի իմ պարկեշտ Հէնրին"։

Այդ ասելիս մայրը մօտեցաւ որդուն և գգուեց Նրան խանդակաթ սիրով և անձկութեամբ։

Մարդը շարժեց իւր ուսերն մի ազդու ցնցմամբ, իբրև թէ կամենում լինէր ասել, ո՜հ կանացի նանրահոգութիւն և անմտութի՛ւն։—«Հերի՛ք այդ մասին», ասաց նա։ „Հէնրին կերթայ քննութիւն տալու և ես վստահ եմ նրա վերայ։ Նա յաջող դուրս կը գայ քննութիւնից։ Չէ՞, Հէնրի"։

Տղայն իւր հօրը սիրում էր, չնայելով Նրա խստութեան։ Հօր վերջին խօսքերից որդու սրտում նորից վառեցաւ պատուասիրութեան կրակը։ Հայրը վըստահ էր Նրա վերայ, ուրեմն պէտք էր պարզերես դուրս բերել Նրան։

Հէնրին ողջոյն տուաւ, կանչեց Բէյլոյին, որ սպասում էր Նրան դրսում, և հեռացաւ Նրա հետ միասին։

„Գործի եւքը վերջապէս կը տեսնենք այսօր", ասաց միւս առաւօտ մարդն իւր ամուսնին։ «Մինչև այժմ կարծես թէ ամեն բան լաւ է գնում»...

Կինը բան չասաց. Նա մեռելի պէս տժգոյն էր"։

„Ինչ պատահեցաւ, ինչ կայ ա՛յ կին"։

«Ահա տես», ասաց կինը։ „Այս թուղթն ես գտայ այս օր Հէնրիի սեղանում, նրա սենեակը հաւաքելիս։

„Ո՞ւր շտապես, գնա գիմնազիա", աղաղակեց նա, յառաջ քան թէ մարդը կարացել էր հասկանալ կամ կարդալ, ինչ որ ստացել էր կնոջից։ «Գնա՛, հասիր որդուդ։ Հոգուս մի սարսափելի տագնապ է տիրել—չեմ կարող ազատուել դրանից։ Ես մի չարագէտ բան եմ գուշակում"։

„Ի՞նչ նոր բան պատահեցաւ.—Բայց, Աննա, խնդրեմ հանգստացիր"։

Հէնրի Դէսսոյի յիշատակարանը.

Շարունակութիւն։

„Մուցիոս Սցէվոլան իւր աջը կրակի մէջ դրաւ։ Ահա մի տղամարդ։ Ես էլ կուզէի այդպիսի մէկը դառնա՛լ։ Տրտում եմ։ Ստէպ լաց եմ լինում, չը գիտեմ թէ ինչու։ Ինձ թւում է թէ ես մի փառասէր եմ, և չեմ կամենում յագուրդ տալ այս փառասիրութեանս։

Ինձ ի՞նչ, որ ընկերներս զանազան յիմարութիւններ են անում։ Ահա նրանք դարձեալ մի կլուբ են հիմնել. ծխում են, կոնծում են և երևակայում, թէ մի մեծ բան են անում։ Ես ատում եմ նրանց. Իմ նպատակս վսեմ է։

Աստուա՛ծ իմ, թող որ քննութիւններս լաւ աւարտեմ։ Եթէ ինձ այս բանը չը յաջողի,—այն ժամանակ—այն ժամանակ—

Ո՜հ, հայրիկ, ներիր ինձ։ Ես փափագում էի, բայց զօրութիւնս չըբաւեց։—

Ինչպէս տխուր է նայում վրաս Բէյլոն։ Բէյլօ, ամառանոց որ գնանք, նապաստակների ետևից կվազենք, աղուէսներ կը բռնենք։ Չէ՞, Բէյլօ։ Կը ցաւե՞ս, Բէյլօ, եթէ ես մի օր—մեռնեմ։

Ո՜հ իմ սիրելի, ցանկալի մայրի՛կս»։—

Մարդը կարդաց այս մանկական պարզմտութեամբ և դիւրագորով ըզգաստութեամբ համակուած գրութիւնն և զարհուրեցաւ։ Սակայն մի վայրկեան միայն։

«Այս տեսակ բաներ ո՞վ չունի գրած իւր կեանքում։ Ես միշտ ոտանաւոր էի շարադրում, միշտ էլ կամենում էի մեռնել»—ասաց Նա կատակով իւր ամուսնին, որ նայում էր Նրա վրայ տագնապահար։ „Տար նորից իւր տեղը դիր այս տետրակը։ Ես գիտեմ, որ մարդ միշտ ամաչում է, երբ այսպիսի բաներն ուրիշի ձեռքն են ընկնում։ Սակայն ինձ պէտք է գործի գնալ։ Ցտեսութիւն, Աննա"։

—

Նրանք պառկած էին անտառի մէջ մօտ առ մօտ—պատանին և շունը։ Պատանին առաջ սպանել էր հրացանով հաւատարիմ ընկերին և ապա թէ ինքն իրեն դիտապաստ արել։ Նա այնպէս լաւ էր նշան դրել իւր ճակատին, որ մահն իսկոյն վրայ հասած կը լինէր։

Միևնոյն օրը փոստը բերաւ մատիտով գրուած մի փոքրիկ նամակ։

„Սիրելի Հայրիկ և Մայրիկ"։

„Դասարանս փոխել չկարացայ։ Այս բանին չեմ կարող դիմանալ։ Չեմ կարող, չեմ էլ ուզում ապրել այսուհետև։ Կարդացէք յիշատակարանն, որ կընքուած կենում է անկողնիս տակ"։

Ո՜հ, այն ինչ աղիողորմ ճիչ էր, որ արձակեց թշուառ մայրը,—ինչ սարսափ էր, որ զգաց խուճապած հայրը։ — — —

րի անհոգութեան վերայ, որոնք ընտանեբար բնակուել էին թշնամի ազգի մէջ և գերադաս էին համարել փոխանակ քաղաքաբերդում, փարթամ ամառանոցներում ապրելու, տրոպիկական ճոխ բուսականութեամբ շրջապատուած, հեգնաբար բացականչում է՝ „Փրանսիացիները չեն կարող առանց սիրուհիների դիմանալ“։

—

ՍՊԱՆԻԱ։ — Յունիսի 27-ի պատգամաւորների ժողովի նիստը նշանաւոր էր հակառակ կուսակցութեան պարագլուխ Սագաստի ճառով։ Սագաստը գովաբանում է ազնիւ վարմունքը թագաւորի, որ չը վախեցաւ վարակիչ ցաւից և վտանգաւոր ճանապարհորդութիւն կատարեց Արանժուէզ։ Յետոյ հռետորը մատնանիշ է լինում ազատամիտների միութեան անհրաժեշտութեան մասին և նկատում է, որ եթէ իր ձեռքումն գտնուէր կառավարութեան ղեկը, նա կառաջարկէր ընդհանուր քուէարկութիւն բոլոր ընտրութիւնների համար էր։ Հռետորին պատասխանում է Կանովասը. սա ասում է, որ Սագաստի առաջարկած ծրագիրը իսկապէս նշանակում է թագաւորական իշխանութեան ոչնչացումն և համաձայն չէ սահմանական միապետութեան հիմնական սկզբունքների հետ։ Եթէ որև է կերպով յաջողուէր իրագործել Սագաստի ծրագիրը, Սպանիան վերստին կենթարկուէր 1868 թուի յեղափոխութեան այն բոլոր սարսափներին, որոնց դէմ երբեմն միջոց փրկութեան Սագաստան, Կաստելարը և նրանց համախոհները գտան միմիայն դիկտատուրայի մէջ և որոնք, ինչպէս յայտնի է, վերջացան բանի ոյժով, գործ դրած գեներալ Պավիայից, որը հրացանների կոթերով վանդեց պատգամաւորներին ժողովի դահլիճից։ Նիստը փակուեցաւ գաղթականութիւնների նախահաշուի և նաւատորմի վերանորոգման օրէնքի հաւանութիւնից յետոյ։

—

„Times“-ին Փարիզից հեռագրում են, որ աւղանեան հարցը միատեսակ ազդեցութիւն չունեցաւ Բերլինի բորսայի վերայ։ Այսպէս օրինակի համար այն բանկիրները, որոնք այն շրջաններին էին պատկանում, որտեղ հաստատում էին որ պատերազմ չի լինիլ, աշխատում էին գինը բարձրացնել։ Սրանց թւին էր պատկանում Վիլհելմ կայսեր բանկիրը, որը յաճախ պատահում էր արքունիքում և միշտ լսում էր, որ աւղանեան հարցը պատերազմի առիթ չի տալ Անգլիայի և Ռուսիայի մէջ։ Ընդհակառակն իշխան Բիսմարկի բանկիրը, որի ընկերական շրջանում միշտ խօսք էր լինում պատերազմի անհրաժեշտութեան մասին, աշխատում էր վայր իջեցնել ռուսական փոնդերի դրամարժէքը։ Այս անարիւնահեղ պատերազմում յաղթանակը տարաւ Վիլհելմ կայսրի բանկիրը, իսկ իշխան Բիսմարկի բանկիրը մեծամեծ վնասներ կրեց։

—

ԳԵՐՄԱՆԻԱ։ — Զանզիբարից անմխիթար տեղեկութիւններ են ստացվում գերմանական գաղթականական ձեռնարկութեան համար. Բժիշկ Ֆիշերի ասելով, երկրի վիճակը Զանզիբարում շօշափելի կերպով փոխուել է և այն էլ ոչ յօգուտ Գերմանիայի։ Առաջ Զանզիբարի սուլթանը սիրում էր գերմանացիներին, այժմ նա նրանց ատում է։ Մի քանի ամիս առաջ շատ հեշտ էր նրան համոզել ընդունելու Գերմանիայի հովանաւորութիւնը, իսկ այժմ բոլորովին անձնատուր եղաւ անգլիացիներին։ Անգլիական նաւատորմը դադարեց այնպէս խստութեամբ հսկել ստրկավաճառութեան վերայ։ Այս պատճառով ստրուկներին ներմուծութիւնը Զանզիբար նորից մեծացաւ։ Անգլիական գլխաւոր հիւպատոսը, որին մի ժամանակ ատում էին Զանզիբարում, այժմ ամենամեծ ազդեցութիւն ունեցող մարդն է։ Գերմանական աֆրիկական ընկերութեան անդամները մէկը միւսի յետևից թողնում են Զանզիբար և գաղթում։ Սուլթանը ամենուրեք վարսեց իր դրօշակը և ամեն տեղ հաստատեց զինուորական պահնակներ։ Տարաձայնութիւններ Գերմանիայի և Զանզիբարի սուլթանի մէջ անխուսափելի են։

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մարկիզ Սալիսբերիի ընտանեկան կեանքը. — „Revue politipue et littèraire“ ամսագրի վերջին համարի մէջ տպուած է մի փրանսիացի պրօյցը, որ Փրանսիէն լեզուի կրթիչ է եղել Անգլիայի այժմեան առաջին մինիստրի, մարկիզ Սալիսբերիի տանը։ Դասատուի վերայ շատ քաղցր տպաւորութիւն է թողել իր բնակութիւնը ազնիւ լորդի տան մէջ։ Ինչպէս երևում է պրոյցից, Սալիսբերիի ընտանիքի կենցաղավարութեան եղանակը յիշեցնում է հարուստ ռուսական ազնուական գերդաստանի կեանքը։ Ոչ մի ամբարտաւանութիւն, ոչ մի էտիկէտ, այլ ամենքին թոյլ է տրուած իր ուզածին պէս անցկացնել ժամանակը։ Միակ պաշտօնական վայելեանը ամենօրեայ կեանքի մէջ լինում է միմիայն ճաշը, որին, հին անգլիական աւանդական սովորութեան համաձայն, պետք ներկայանան սգամարդիկը ֆրակով (պաշտգգեստ) և սպիտակ փողպատով, իսկ տիկինները բաց manche courtes-ով։ Ինքն մարկիզը իր ընտանիքի մէջ շատ բարեհոգի է և միայն ժամանակ առ ժամանակ նրա շերթունքներին երևում է չար հեգնական ժպիտ, որը համարեայ թէ միշտ լինում է և պարլամենտում։ Նա երբեմն շատ կծու նկատողութիւններ է անում, բայց միշտ չափաւորանց քաղաքավարի կերպով. առ հասարակ նա շատ ախորժելի խօսակից է։ Մարկիզը խիստ սիրում է իր կնոջը և երեխանց և ընտանիքը ապրում է կատարեալ հանգստութեան մէջ։ Մարկիզուհին մինչև այժմ գեղեցկուհի է։ Բացի սորանից մարկիզուհի Սալիսբերին շատ խելացի, հեռատես կրթուած և շատ կարդացած մի կին է։ Նրանք 7 որդիկ ունին, երկուսը աղջիկ և հինգը տղայ։ Երկու աղջիկն էլ շատ սիրուն են։ Անդրանիկ աղջիկը ժամանակակից ազնուական տիկնոջ տիպ է ներկայացնում։ 1883 թ. նա ամուսնացած է լորդ կանցերի որդու հետ։ Կրտսեր աղջիկը չափազանց սրամիտ է և, ինչպէս անդրանիկ աղջիկը, կարող է զրուցել ամեն բանի մասին, և այն էլ պարզ և առանց ճոռոմաբանութեան։ Անդրանիկ որդին արդէն 24 տարեկան է։ Նա իրեն պատրաստում է քաղաքական գործունէութեան համար և, ի հարկ է, ծննդեան իրաւունքով, լորդ կը լինի։ Երկրորդ որդին, որը նախանշանակվում է եկեղեցուն ծառայելու համար, շատ քիչ է պարապում, ինչպէս և բոլոր անգլիական clergy men-ները, այն գործով, որին նուիրել է նա իրեն, այլ աւելի օրիորդների ետևից է ման գալիս, խաղում է կրօկէտ, աղուէսի որսի է գնում և հեծնում է ձի։ Երրորդ որդին ամենից աւելի շատ նման է հօրը։ Նա փաստաբան է լինելու և ապա պատգամաւորների ժողովի անդամ է դառնալու։ Չորրորդ որդին երևի մի քաջ զինուորական է լինելու, իսկ ամենափոքրիկն ուզումէն դիւանագէտ շինել։ Դասատուի խօսքերին նայած, այդ փոքրիկը շատ խելօք է, բայց առողջութիւնը շատ թոյլ։ Ինչպէս և միւս արիստոկրատ անգլիական ընտանիքները, Սալիսբերիի գերդաստանը մի քանի անգամ է փոխում իր բնակութեան տեղին։ Դարնանը նա 'ի հարկէ ապրում է Լոնդոնում. ծովում լողանալու միջոցին կենում է Դիէպպում, իր սեպհական ամառանոցում, իսկ ձմեռը փոխոխակի իր Դատֆիլդի, Բոռնէմուտի կամ Կրենբորնի փառահեղ կալուածքներում։

## „ՆՈՐ-ԴԱՐ“-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

ԲԱԳՈՒ. Պ. Ս. Ս-ին։ — Չենք հասկանում թէ այդ ինչպէս է պատահել, որ Ձեր ուղարկած հաշիւը չէ հրատարակուել։ Շատ շնորհակալ կը լինէինք, եթէ շտապէիք մեզ նորից ուղարկելու ստորագրողների անուանացուցակը և պօստայի քվիտանցիան։

## ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

### „ՆՈՐ-ԴԱՐ“-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

11 յուլիսի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. «Гражданинъ» հաղորդում է, որ յուլիսի երկրորդ կիսում կը կայանայ բարձրագոյն ճանապարհորդութիւն, որը, ըստ երևոյթին, մեծ շքով կը կատարուի և կը տևի մի շաբաթի չափ։

Սր. Սինոդի օբեր-պրօկուրորը պաշտօնական գործերով հեռանալով մի քանի ժամանակ Պետերբուրգից, յանձնեց իր պաշտօնական պարտաւորութիւնները իր ընկեր Սմիրնովին։

«Правительственный Вѣстникъ» լրագիրը յուլիսի 1-ից ստացուած տեղեկութիւններ է հաղորդում դաշտերի դրութեան մասին. աշնցանի հացերը գոհացուցիչ են Արխանգելսկ, Վոլոգդ, Պերմ, Նովգորոդ, Եարոսլավ, Ղազան, Օրէնբուրգ, Պոդոլսկ, Կիէվ, Կովեն, Գրոդնո, Վիլնո, Վիտեբսկ, Վարշավ, Կէլեց, Լիւբլին, Պետրակով, Պլոցկ, Ռադոմ, Սուվալկ և Սեդլեց նահանգներում. մասամբ գոհացուցիչ են, մասամբ միջակ են՝ Վեատսկ, Օլոնեց, Ս. Պետերբուրգ, Սիմբիր, Ուֆիմ, Բեսարաբ, Վոլին և Կուրլեանդ, Լիֆլեանդ և Լոմժէն նահանգներում. միջակ են՝ Սմոլենսկ, Կալուգա, Տուլա, Սարատով, Սամարա, Խերսոն, Մինսկ, Մոգիլեօվ և Էսլեանդ նահանգներում, մասամբ միջակ են, մասամբ անգոհացուցիչ՝ Պսկով, Տվեր, Վլադիմիր, Ռիազան, Պէնզա, Օրլով, Կուրսկ, Խարկով, Չերնիգով և Տաւրիկեան նահանգներում, անգոհացուցիչ են՝ Աստրախան և Եկատերինոսլավ նահանգներում։ Գարնցանի հացերը բաւականացուցիչ են՝ Արխանգելսկ, Վոլոգդա, Եարոսլավ, Պոդոլսկ, Կովեն, Վարշավա, Կալիշ, Կէլեց, Լիւբլին, Պետրովսկ, Պլոցկ, Ռադոմ, Սուվալկ, Սեդլեց նահանգներում. մասամբ միջակ են Վեատրսկ, Պերմ, Օլոնեց, Մոսկվա, Նիժէգորոդ, Ղազան, Սիմբիրսկ, Ուֆիմսկ, Բեսսարաբ, Գրոդնո, Կուրլեանդ, Լիֆլեանդ, Լոմժա նահանգներում. միջակ են՝ Նովգորոդ, Կոստրոմա, Օրէնբուրգ, Կիեվ, Մինսկ, Վիլնօ, Էստլեանդ նահանգներում. մասամբ միջակ են, մասամբ անգոհացուցիչ են՝ Ս. Պետերբուրգ, Տամբով, Օրլով, Պոլտավ, Սարատով, Սամարա, Տաւրիկ, Խերսոն, Վոլին, Մոգիլեօվ Վիտեբսկ նահանգներում. անգոհացուցիչ են՝ Պսկով, Տվեր, Վլադիմիր, Սմոլենսկ, Կալուգա, Տուլա, Ռեազան, Պէնզա, Կուրսկ, Վորոնէժ Խարկով, Չերնիգով, Աստրախան և Եկատերինոսլավ նահանգներում։

ԼՈՆԴՈՆ. Դիկս-Բիշը պատգամաւորների ժողովում յայտնեց, որ դեռ պաշտօնական տեղեկութիւններ չեն ստացուած Մահդիի մահուան մասին։

12 Յուլիսի.

ԼՈՆԴՈՆ. Սալիսբուրիի թերթը «Morning Post» հաղորդում է, որ Ռուսիան առաջարկեց ժամանակաւոր համաձայնութիւն աւղանեան հարցի մասին, դեռ չը նախավըճռելով Զիւլֆիկար անցքի հարցը, բայց պահանջում է, որ աւղանցիները չը գրաւէին այն դիրքերը, որոնք տիրապետում են ռուսներին անհրաժեշտ, միակ արօտատեղիների վերայ, և թէ այս դիրքի գըրաւումն Ռուսիան կընդունէր իբրև խաղաղութեան սպառնացող մի վարմունք։ Կաշգարում շարունակվում են խռովութիւններ և չինական կառավարութիւնը այնտեղ զօրական օգնութիւններ է ուղարկում։

Բօրկը յայտնեց պատգամաւորների ժողովում, որ եգիպտական փոխառութեան հարցի առթիւ բանակցութիւնները դեռ շարունակվում են։ Վերին Եգիպտոսում համոզուած են Մահդիի մահուան մասին. սրան ապացոյց կարող է լինել և այն, որ Դոնգոլը և նրա շրջակայքը թողուած են նրա համախոհներից։ Դրումմոնդ Վոլֆի առաքելութիւնն Եգիպտոս դեռ որոշուած չէ։

ՆԻՒ-ԵՈՐԿ. Գեներալ Գրանտը, Միացեալ-Նահանգների նախկին նախագահը վախճանուեցաւ։

ՓԱՐԻԶ. Դիւանագիտական յարաբերութիւնները Չինաստանի հետ վերանորոգվում են։ Բերլինի չինական դեսպանը, որ և Փարիզի դեսպան է նշանակուած, ժամանեց այստեղ իր հաւատարմութեան վկայականները ներկայացնելու համար։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մոզդոկի Քաղաքային Երկսեռ Ուսումնարաններումը հարկաւոր է մէկ ուսուցիչ Հայոց լեզուի դասատուութեան համար։ Ցանկացողները ընդունել այդ պաշտօնը 188⁵/₆ ուսումնական տարուայ սկզբից, կարող են դիմել գրաւոր յայտարարութիւններով Մոզդոկի Քաղաքային Վարչութեանը, ներկայացնելով կարևոր վկայականներ։ Պայմանները կարելի է իմանալ Քաղաքային Վարչութիւնից։

3—3

Eau de cologne des tuileries
De RIGAUD et C-o
Rue Vivienne, 8, PARIS
Օ ՏԸ ԿՕԼՕՅՆ ՏԷ ԹԻՒԻԼԵՐԻ
Ռիգօ և ընկերութեան
Վիվիէն փողոց № 8
ՓԱՐԻԶ

Տարաշխարհիկ և հազուագիւտ անուշահոտ ծաղիկներով պատրաստուած այս Օ տը Կօլօյնը ամէն փափկասուն կանանց և օրիորդաց միակ գործածածն է այսօր։ Ընտիր, քաղցրաբոյր, ախորժելի և տևական հոտ մը ունի, այս պատճառաւ է որ փափկամորթ և նազելի կանայք և օրիորդք գործ են ածում նրան թէ դաշկինակի վերայ և թէ լուացուելու համար։
Ծախվում է Տփխիս Կովկասեան դեղագործական ընկերութեան կեդրոնատեղին։ T

(ամ. 3) 9—1

Անդրկովկասեան երկաթուղին։

### ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ „ԹԻՖԼԻՍԻ“ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ։

Բաթումի պոստ. գնում է ժ. 8—35 րոպ. առ.
Բաթումից „ գալիս է „ 10—25 „ գիշ.
Բագու . . . . գնում է „ 10—55 „ գիշ.
Բագուից „ „ . . . գալիս է „ 8— „ „ ցեր.

### ԹԻՖԼԻՍԻ ԵՒ ՍՈՒՐԱՄԻ ՄԷՋ.

Թիֆլիսից ապր.—Ճանապ. գնաց. գնում է . . . . . . ժ. 3—15 „ առ.
Սուրամից . . գալիս է „ 8—24 „ առ.

Վլադիկաւկազեան պօստային

### ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ «ԹԻՖԼԻՍ» ԿԱՅԱՐԱՆՈՒՄ.

Կառքեր, որոնք ճանապարհին գիշերելու կայարաններ ունին։

Թիֆլիսից դուրս են գալիս առաւօտեան 8 ժամին. Վլադիկաւկաս գալիս են երեկոյեան 5 ժ.—11 րոպ. և 6 ժ.—43 րոպ. մէջ

Վլադիկաւկասից դուրս են գնում առաւօտեան 9 ժամին։ Թիֆլիս գալիս են երեկոյեան ժամի 4 և 44 րոպ. և ժ. 5—25 րոպ

### ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ։

Նոյեմբերի 1-ից կազմուածցուցակը շոգենաւերի երթևեկութեան համար մի շաբթուայ ընթացքում Բաթումի, Օդեսայի և Կ. Պոլսի մէջ։

### ԲԱԹՈՒՄԻՑ ԳՆՈՒՄ Է

ՀԻՆԳՇԱԲԹԻ օրերը, ժամի 4-ին երեկոյեան ուղիղ գծով Նովօրօսիսկ և Կերչ քաղաքների վերայ։

ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ, ժամի 8-ին երեկոյեան շրջանական գծով ամեն նաւահանգիստների վերայ։

ԿԻՐԱԿԻ օրերը, արտասահմանեան գծով դէպի Կ. Պոլիս։

### ԳԱԼԻՍ Է ԲԱԹՈՒՄ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ, կէս գիշերին մօտ Օդեսայից շրջանական գծով։

ՈՒՐԲԱԹ օրերը առաւօտեան, Օդեսայից ուղիղ գծով Կերչի և Նովօրօսիսկ քաղաքների վերայ։

ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ, առաւօտեան, Կ. Պոլսի

Дозволено цензурою.Тифлисъ, 12-го Іюля 1885 г. Տպարան Ա. Ա. Միխելսոնի ա. № 12. Типографія А.А. Михельсона. Гол. пр. д. № 12.